

պինք: — Կը մալթենք եւս որ կ. Պոօքէւման փամփով հանի յայտնած փափաթին, այսինքն թէ՛ հայերէն թարգմանութիւնալաւակոց զրոց թարգմանուէր ի գերման լեզուի վայելս բանասիրաց:

Որչափ ալ կ. Պոօքէւմանի առէն կարծեաց յանձն չենք առնոր զիջանիլ, այսուհանուղերձ՝ զինքը կը ճանշնանց արդի լեզուագէտ բանասիրաց զասակարգին մէջ իրբեւ առաջիններէն մինի հին լեզուաց, մանաւանդ ասորականին, ունեցած մեծ հմտութեանը պատճառաւ: — Ալիւալ զերմանական բարձր և օգտաշահ թերթերու մէջ կը զին ուսումնական յօդուածներ. — Հրտարակած է. *Syrische GRAMMATIK mit Litteratur, Chrestomathie und Glossar. 1889.* — LEXICON Syriacum, որ շատ զօվեսից արժանացած է. — *Hilfsmittel für das studium der orientalischen Sprachen* համախոմք լեզուագէտ մատենագրուղաց մէջ զասակարգուած է:

Հ. Ս. ՍԱՐԵԱՆ

Հ Ա Ն Ք

ԵՒ ԻՐԵԱՑ ՍՏՈՒԴԱԲԱՆՈՒԹԻՒՆՆ

(Ըար. տես էջ 7)

Մարիք

Ա. Յ հին բառերէն է, որու հոմանիշ են Յունատար, Յօնից քար, Այրած պղոնձ, Խարոյր, Խորուր բառերն և ըստ նորայրի Յօնքար, Խարրաքար¹: Պրակ. Հաւաքածար, = բասիլիթ², Թրք. Աշուշ, Երք. Պաթ = փոքր, Ասոր. Հաւաքած = սապֆ, Յն. Տէթի = Սթիլէ, Լո. Տիբիում կամ Antimonium³, Խո. և Սպան. Antimonia, Անդզ. Antimony, Գերմ. Spießglanz, Գլ. Antimoine: Այս ամէն Եկուուց մէջ կը տեսնենք որ Մարիք նոյնանիշ բառն, ըստ բաւականի համանչեակ է և շատերն արար հոմանիշէն կը կարծուին փոխառեալ Բաւականի Բայց մեր Մարիքի բառն և իւր ամբողջ

1. Երբ տարիներ առաջ հայ ուսումնական բառերու գործածութիւնը գեր հանրանալ չէր սկսած, այլ և այլ մասենազրաց անեանօթ մնալով մեր հին ուսումնական բառերը, եւրոպական բառերը հայ տառերով կը գործածէն, որպէս շատ զրբերու մէջ՝ փոխանակ Մարիքի գերոյշեալ հայ հոմանիշներէն մին զործածեւու: կը տեսնուի եւրոպական փոխառեալ Անդրիմոն կամ Անդրիմոնիոյ բառը:

2. Հաս ունաց բազ = պէսմէ, կամ բազ = վեսմէ: Ականց գերըք փոխանակ այս բառերու, կը որէ Եկեղիկ սիրուէ, այսինքն ծարիք քաշելու քար ասուի և ի մեջ կազմաւած են Մարտրաքր, Յօնից քար (ընդունելու շապարելու քար):

3. Լատ. Մարիոն Անտիոնում բարփն սուուզան բանութիւնը ժամանակէ մէր վեր խնդրոյ նիւթեղած է, հետաքրքրական և միանգամայն ծրածողիք: Կը պատմեն թէ Բնենդիկիտեան կրօնաւոր մը Բարսեղ Վալենթին անուումբ 1413ին, ժամանակակից զետութեան համեմատ կը զրացէր իմաստափական քարը զանելու: ու. իւր ձեռաց մոդական նիւթին էր Մարիքը, որով մետաղները դիւրաւ կը հակեցնէր: Անով անդորաքանաւոր նիւթոց վրայ զանազան փոր-

էեր կատարելէն վերջը: Կ'ուզէք նաեւ կենդանեաց վրայ եւս փորձել, ուստի որ մը իւր խոչերուն ծարիք կը կերցնէն ու կը տեսնէ որ ամուղջ խոչերն ալ կը պարարտանան կը գիրանան: Անով մեծ զիւտ մը դատած կ'ըլլայ, և կը սկսի ծարիքով զանազան գեղեր պարարտել: Մի օր իւր այն պարարտած ծարրախառն դեղերն իւր կըսոնակից միանձնանց տալով, անոնք փոխանակ դիրանալու, ընդհակառակն ամէնն ալ թռնաւորուելով կը մեանին: Ու ասկից կը հետեւցնեն, թէ ծարիքը մեանձնանց համար ուստակար չէ, որով նոյն մետաղին անունը կը մեայ Անտ-ուուն (յն. առև հակասակ, մօնօս միայիշ) = հակասակ միանձնանց: Լեզուացէն բառ բառագետաց համար իրաւացի է առասպել կարծել այս սուուզաբանութիւնը:

4. Յիշենք Մարիք Մինիք հանրագիտարանի մէջ արծանագրած հետաքրքրական տեղեկութիւնները: Հանիք մ'է մետաղաց շտանման, կը դասուի արծաթի և կապարի հանքերու մէջ: Մինադոյն է և լի փայլուն երկայն ըիւրեղներով: կը խառնուի զանազան մետաղաց հետ և անոնց ձուլման կը ծառայէ: Մարիքն այժմ ի բժշկութեան շատ կը գործա-

հոմանիշներն, ամենեւին ձայնական մերձաւ-
ւորութիւն կամ նոյնութիւն լունին յիշեալ
արհեւեան և եւրպապական լեզուաց նոյնանիշ
բառերուն հետո։ Պարսիկ լեզուի մէջ գառած
ենք ո՞չ = Զարկվլ բառն, որ մեր Ծալիլ
բառին հետ գրեթէ բոլորովին համահնչակ

է, բայց ոչ նոյնանիշ, [Զարկվլը պարսիկերէն
կը նշանակէ կոյլը] որով անշուշտ պիտի չա-
սարկեն թէ Տարիիը, Զարիյէն փոխանեալ
է: ի գաղուց Նարիրը իրեւ աշարեղ կամ
զարդ գործածուած է⁴: Մեր նախնեաց զրոց
և թարգմանութեանց մէջ գործածուած է այս

ծուեր, սակայն երկուտասաներորդ դարէն առաջ,
միայն սնգոյրի բաղադրութեան մէջ կը գոր-
ծածուէք, և այս նշանակութեան ու այս գոր-
ծածութեան համար է որ մենք ալ հոս անոր
վրայ կը խօսինք: Ա. Գիրզը (Պ. Քաջ. Թ. 50):
Կը ներկայացնէ մեր զայն իր սնցոյր զոր կա-
նայք կը գործածէն աշքերնին սեցնելու հա-
մար: Ցեղաբէլ լսելով որ Յէւս ի Սամարիա
պիտի մոնէ, Եպարքնաց զալս իր կամ ըստ եր-
եղ զալս իր ի ժարիր, զարգարեց կամ ամ-
բովզութեամբ սնկայրով ներկեց աշքերը այդ
յափշտակին հետ խօսելու և իրեն զիմաց ե-
րեւնալու համար: Որովհետեւ մեծ, խօսր բա-
ցուուք և սեւ աշքերը գեղցիկ կը համարուէն,
անոնք որ գեղեցիկ երեւան կ'ուզէին, կը ներ-
կեն աշքերնին, աշքերնուն զոր կողմէ և ար-
տեւանունքը ծարրոյ ներկի տուրի մէջ մխուած
ասեղով մը, աշքերնին սեցնելու, արտեւա-
նունքը մեցնելու կամ մանաւանդ զանոնք
ծալլենու համար որպէս զի աշքերը աւելի մեծ
երեւին: Դեռ հիմայ իսկ ասորի, արար և բա-
րելուացի կանայք աշքերնուն ըուլըր կը ներ-
կեն և կը սեցնեն: և թէ արք և թէ կահայք,
անապատին մէջ, սեւակ կը դնեն աշքերնուն
մէջ պատսպարելու համար զանոնք արեւու
տաքութենէն և իրեն հառաջայիթ սաստկու-
թենէն: Պ. Տարզիկէ կ'ըսէ թէ արարաց կա-
նայք իրենց աշաց կողմը կը ներկեն ՏԱ-
ՌՈՎ (զոր իրենք Քէհիլ կը կոչեն) բաղա-
զուած և սեւ ներկով մը: Այս սեւակով աշաց
խոռոչէն զորս զիծ մը կը քաշէն իրենք, աշքը
աւելի իսոր երեւցնենու համար: Խօսյի Որսնի
զատերաց զարդերը համերեւու միջոց, չի մոռ-
նար նաեւ ասեղները որով իրենց աշքերը և
արտեւանունքը կը ներկէին. (Տերինին մէջ
չկայ բնաւ յիշատակութիւն):

Նա յօնս ի մուը տամուկ ներկեալ

Խուռ ասեղամբ յօրինէ:

Եւ զգողոջան աշան ամբարձեալ

Եղագարէ: (Յորմանալ Երգիծ. Բ.)

Երեմա խօսելով առ զատերս Սիսնի կ'ըսէ. Երկ
կարմիր զգեցիս, և զարդու սահով զարդա-
րեսիս, և ամասցու ժարիր յալս ըս, ի զոր

են զարդարանեցն ըս. մերժեցին զիեզ հոմանիքն
ըս: (Երմ. Դ. 50): Եւ Եղէկէէ՝ չնացեալ կոնջ
մը օրինական հրեայ ժողովրդեան անօրէնու-
թիւնը յայտնելով կ'ըսէ թէ լուացուցաւ, անոյն իւղերով սծուեցաւ, աշքենի ի ժարիր և
նեղոյթ չզարեց, և այցն: Յօվը կը յայտնէ
մեզ թէ որպէս յարգի էր ծարիր, իրեն զատե-
րաց միոյն անունը Ամաղրեղիշը (անօթ ծար-
րոյ կամ տուփ մեղորէ) կոչելով: Ենովայ
դրոց հեղինակէ կ'ըսէ թէ նախ քան զեղեղեց, Աղլիէլ հրետատակէ՝ սնգուրով զարդարուելու
արուեստը սորվեցուց աղջկանց:

Տերուուղիւնու և Ա. Կիպրիանոս մեծապէս
կուռեւ են այս սովորութեան դէմ որ յանո-
խած էր յլելիքէն ուր նոյն իսկ արք աշքերնին
ու յօնքերնին կը ներկէին. Անրիկի այցերով ու սա-
տանային ժարարով, այլ Քիխատոսի սեգուրով,
կ'ըսէ Ա. Կիպրիանոս: Պլիքիոն հովայմայիշ
կանանց վրայ խօսելով կ'ըսէ թէ մինչև իսկ
աշքերը կը ներկէին Սարգանաբարդ աշքերն ու
յօնքը կը ներկէր: Յօվսեպոս նոյնպէս կը կը-
տամբէ խոսվարաները՝ որոնք նախանձառքը
կը կուռէին և երուսաղեմի տաճարին ափ-
րացած էին:

Ականց զիրքը Մարրոյ բնութիւնը ու յատ-
կութիւնը կը նկարագրէ: յլշենք ամենէն հե-
տաքրքական մատերը. «... և այն է քար-
ին սեւ և ճիշտ անփայլուն և յոյժ ծանրը.
և զոյն նորս որպէս զգոյն երկամիոյ, և է մա-
տէն նորին ի բացաւմ տեղիս: և լաւագոյնն
այսց Խոփէակին է»: Այժմ նշանաւոր ժա-
րիրն կը գանուի Պոռնէոյ կզզւոյն և Հալէկի
մէջ Յատկութեան համար կ'ըսէ. «Յատկու-
թիւն նորս այն է, զի աչաց յօյժ օգտակար
է և զոյս տեսութեան ժողովէ, և ուժեղա-
ցուցանէ զիլս աչաց, և զարկածն՝ որք աչաց
հանդիպեալ իցեն պատճառաւ ցաւոյ՝ փարա-
տէ. և ծերոց՝ որ պատճառաւ բազմամեայ դո-
լոյ: ցաւեալ իցեն աշք, ծարիրն իսմիթի յօյժ
օգտակար է ...»: Կը թողունք միւս յիշուաւ
բուժէ յատկութիւնք, որ թերեւս հետաքր-
քական ըլլալէն զատ ուրիշ զիւնին:

բառը և յիշուած իրրեւ զարդադեղ : ի Առւրք
Դիրս յաճախ գործառուած է այս բառը :
Ը. Թ. Թ. թ. 30. « Եւ Եեզարէլ լուաւ, և
ծարքեաց զաշ իւր և զարդարեաց զզուին
իւր ... » : Երեմ. Դ. 30. « ... և ամասցես
ծարիր յաշու քո, ի զուր են զարդարեակն
քո » : Եփկ. Խ. 40. « ... ի բազանիս մտա-
նէիր, ի ամրիր և ի սնդորյ չպարէիր ... » :
Ար նախնի Ծարիր բառը չփոթ գործածու-
թիւն մը չէ ունեցած . թարգմանութեանց
մէջ անվրէպ սեփականուած է լու . Stibio և
յն . Տունի հոմանիշն :

Ֆարլաքար

Ինչպէս Ծարիր նոյնպէս նաեւ Ծարրաքար
չին բառ մ'է, և մեր զրականութեան մէջ
Երրենն զործածուած : Հայկազ . Բառարանի
մէջ սա Հանրարուած է լամարած ծարիր, և ա-
ռոր հոմանիշ են թութի աչաց կամ Աչաց
թութի, թութիսյ, Անաղած ծարուր, Նարիր
քար, Նարուր : Նորայր բիեզանդացին [նոյն-
պէս իւր ուսումնական բառերը զործածու-
մի բանսէկը] այս բառը Ծարիրի հետ նոյն
կը Հանրարի : Բայց ճշութեան համար լա-
ւագոյն է որոշել : Հ. Քայլոնի վարդազպէտ
իւր ուսումնական բառարանին մէջ՝ նախ-
նեաց այս բառը սեփականուած է զզ . Antimo-
niure . [Խ. Անտիմոնիոր] բառին : Եր-
կու տարի առաջ այս բառը սեփականնեցինք
զզ . Stibine, [Խ. Անտիմոն] բառին :
Ծարրաքար բառը թէ Antimoniureի և թէ
Stibineի կրնակ հաւասարապէս սեփակա-
նել, քանի որ այդ երկու տարրեր հանկերն
հուռ ու անաղած վիճակի մէջ դանուած ծա-
րիրներ են . և դարձեալ ոչ միայն Ծարրաքար,
այլ նոյն իսկ Անսպաս ծարուր նոյն երկու
երրորդ . բառերուն լրանանց սեփականել : Հ.
Քայլոնայ և Նորայր Բիւզանդացոյ բառա-
րաններն կը պակսի զզ . Stibine բառը .
որուն վերջերս իրեւ հոմանիշ սեփականուած
է նաեւ ծծմբածարիր բառ :

Շարայարելի

Հ. Ս. ԵՐԵՒԱ.

ԲԻԲԻՐԱԿԱՆ . — կը իրա-
տարակէ քանախրական , տեղագրական ,
ազգագրական յօնուածներ : Խմբ . Ս. Դա-
րեակ : — Գինն է 12 ֆու .

Հասցէ Direction du « Puraighn » Balit-
ché kapou kazasker han N. 16 CONstan-
TINOPLE .

ՆԿԱՐԱԳԻՐ ԲՆԱԿԵԽԱՐՀԻ

ԱՇՏԱՐԱԿ

ԱՇՏԱՐԱԿ . — նշանաւոր և զինաւոր գիւղ
Արարատայ Արագածոտն գաւառի համա-
նուն վիճակի մէջ, Էջմիածնի հիւսիսային
կողմը 20 վերստ հեռու կառուցուած է Քա-
սազ զետոյն աշակողմը, զեղագիտակ սա-
րահարմի վրայ . հիւսիսային և արեւմտեան
կողմերէն կը բարձրանան Արագած լերան
ծիւղերը, իսկ հարաւային կողմն են զիւղի
ընդարձակ այզիները, և մինչեւ Մասիսի
ստորաբը, զրեթէ 60 վերստ երկայնու-
թեամբ՝ լայնատարած զաշտ է : Աշտարակի
հիւսիսային կողմը զրեթէ կես ժամ հեռու
կը զանսի Մողնի, և հարաւային կողմն է
Օշական, մէկ ժամ հեռաւրութեամբ :

Թէպէտեւ ցարդ ծանօթ պատմութիւնն
մեզ կը յայսնէ Աշտարակի անունն իննե-
րորդ զարու մէջ, յիշելով զայն իրեւ հայ-
րենիք Գէորգ Ա կամողիկոսի, բայց իւր հին
շինուածոց և պարսպաց մացորդներէն կար-
ծելն հաւանական է, որ իններորդ զարէն
շատ առաջ եւս դյուսթիւն ունեցած ըլլայ,
և թերեւ Արագածոտն գաւառի ամենէն բար-
գաւաճ և բազմամարդ քաղաքաւանն եղած :
Մորիէ անդղիացին, որ 1813 տարւոյ յու-
նիսի 16 ին ասս իշխանեց, կը վկայէ թէ
Աշտարակի բարդաւած և քաղաքակիրթ երկրի
քաղաքի մը հաւասար շբեզութիւն և արժա-
նիք ունի : Գերմանացի Քոյս բուարանն եւս
1837 տարւոյ ապրիլի 18 ին ասս զիշեօ-
թեց, որ և Քասազ զետոյն խսխուանին,
այսինքն վրայ սփռուած լուսնի լուսոյ ըն-
ձայած նորօրինակ երեւոյթներն և այլ պա-
րագայք, որ իրեն վրայ ազգեցութիւն են
ըրեւ նոյն զիշերուան խորին լուսիեան մէջ,
գեղցիկ կերպով կը նկարազրէ : Իսկ ընիկ
Աշտարակցից երեւելի վիպասանն Պերճ Պո-
շանց՝ որ իւր կուշածաղիկ վիպասանու-
թեան մէջ շատ անգամ կը յիշէ և կը նկա-
րագրէ զիւղո, ի միջի պյուս կը գրէ և կե-